# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 47-Լ

«07» 06 2023 թ. գ. Երևան

## ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՂԻԱԶԱՐ ԱՎԱԳՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2023 թվականի հունիսի 6-ի N 239-Ա հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների միջև աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազի և դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի սեպտեմբերի 25-ի N 44 հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը 2023 թվականի հունիսի 7-ից դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Եղիազար Ավագյանի վրա:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 7-ին:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ